

բեաց, որ Պրահմայն ծաղիկներով կը ծածկէ, կամար երկնային, որ կը ծածկես ուրիշ պրանչելիք, թունոց քաղցր բարբառ, երկրիս անուշ բուրմունք, որ յերկնից կ'առնուք ձեր քաղցրութիւնը, մնացէք բարով...: Չեմ կրնար անջատմանս ատեն չժագիկել քանի մը արցունք, ինչպէս որ արշալցյար յերկինս վերանալու ատեն քանի մը կաթիլ ցող կը թափէ երկրիս վրայ...: Ո՞վ չարտասուեր իր առջի օրերն. ով հառաջանք մը չխզապեր երբ խեղճ բնակութիւնը թողու կ'ըլլայ, որ նոյն իսկ լահոռի պրանչելիքները երթայ դիտէ »:

« Բայց ստոյդ կը զգամ որ անանկ ատեն զերկիրս կը թողում, երբ մեծամեծ բաներ հանդիպելու վրայ են: Նարա-մունի, այն իմաստութիւնը զոր դու ամեն ժողովուրդներէն քաղելով բերիր, այն իմաստութիւնը ամեն մարդկանց մէջ պիտի ծաւալի: Այդ երեք երիտասարդներդ որ կը տեսնեմ դաշտին մէջ, և որք հիմա այն երկու արմաւենեաց մէջ կը հանգչին, ինչպէս տաճարի մը մէջ անկէց արևուն ծաղիւլ ողջունելով, այդ երեք մարդիկդ որ արդ միաբանեալը են, օրինակ պիտի ըլլան մարդկութեան, որ պատերազմելէն յոգնած վերջապէս կ'ըմբռնէ մեծ ընտանեաց եղբայրակցութիւնը: Այն պրանչելիքները՝ որ ֆուանկաց աշխարհին մէջ կը հանդիպին՝ կ'իմացընեն ինծի թէ տգիտութեան սոսկալի կանխակալ կարծիքները պիտի անհետանան քիչ ատենէն, հեռաւորութիւնն մարդկանց խտրոց պիտի չըլլայ, և երկնից սուլր կամացը պիտի ծանօթանան՝ երբ իրարու միտքը հասկընան: Այն կամքը, Նարա-Մունի, այն խօսքերուն մէջնէ, զոր դու քաղեցիր, ուստի զանոնք յեղյեղելէն մի ձանձրանար, ինչպէս արեն իսկ չիձանձրանար զերկիրս լուսաւորելէն »:

Ինչպէս որ երկիրս կը համբերէ անոնց որք զինքը կը կոխիռտեն և հերկելով իր ծոցը կը պատուեն, այսպէս ալ պէտք է որ մենք չարին տեղ բարի հատուցանենք:

Բարիք ըրէ և մի նայիր թէ որու կընես:

Մարդս իր կենաց շրջանին մէջ այն ասեն աւելի մերձաւոր կ'ըլլայ երջանկութեան, երբ ազատութիւնն, առողջութիւնն, և սրաի խաղաղութիւնը ստանայ:

Ծերը միտքն այնպէս մը ամփոփեց՝ ինչպէս թէ չուզէր միտքը բերել այն յիշատակները որը չնջուելու վրայ էին, և այս երկու առաջներս արտաբերեց, զորոնք շատ իրաւունք ունէր յեղյեղելու, վասն զի բոլոր կենացը մէջ զանոնք՝ ի գործ դրած էր:

Դարձեալ հողին տալու ժամանակը մրմրուց ըսելով.

Ինչ որ կը փափաքիս որ քեզի ընեն, դու աւուրիչի ըրէ: Ներէ ամենուն, բայց դու քեզի մի ներեր:

=====

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳԻԱՑԻՈՑ ՅԱՓՐԻԿ

(Տես երես 330:)

ԳԼՈՒԽ ԻԴ.

Հովի կ'ինայ. — Անապատին մերձակայր. — Զրի պաշարին որոշամը. — Հասարակածին զիշերները. — Սամուել Ֆերկլարինի անհանգառորիներ. — Ստոյդ վիճակը. — Քենելուտիի և ձոյի ենանդուն պատասխանը. — Գիշեր մըն ալ:

Վիկուրիհան մենաւոր և դրեթէ ցամքած ծառի մը վրայ կռուած ըլլալով, կատարեալ անդորրութեամբ զիշերն անցուց, ճանապարհորդք կարող եղան քիչ մը քուն ըլլալ, որուն այնչափ պէտք ունէին, անցած օրերուն այլայլութիւնները տխուր յիշատակներ թողած էին վրանին:

Առաւոտեան դէմ երկինքը դարձեալ իր պայծառ յստակութիւնն ու ջերմութիւնը ստացաւ: Գունաը օդու մէջէն վեր ելաւ. շատ մը անօդուտ փորձերէ ետև, վերջապէս չափաւոր երագ հոսանք մը գտաւ, որ զինքը դէպ ՚ի հիւմիսային արևմուտք կը աանէր:

— ԱՌ առաջ չենք երթար, ըստ տոքդորը. եթէ չեմ խաբուիր, գրեթէ տասը օրուան մէջ մեր ճամբորդութեն կէսն ըրինք. սակայն այս մեր քալած զնացքով, ամսոց պէսք ունինք ճամբորդութինիս լմնցընելու համար : Այդ բանը այնչափ աւելի դժնդակ է որչափ ջրերնիս ալ սպառելու վրայ է :

— Սակայն ջուր դտնալու ենք, պատասխանեց Տիք. անկարելի է որ գետ մը, առուակ մը, լին մը չգտնենք այս ընդարձակ երկրին մէջ :

— Կը փափաքիմ:

— Չըլայ թէ ձոյին բեռնաւորածն ըլլայ որ մեր ընթացքը այսպէս կը ծանրացընէ :

Քէննըտի այս բանս ձոյին կատակ ընելու համար կը զուրցէր. նա մանաւանդ այնչափ աւելի սիրով կը կատակաբանէր, որչափ որ ինքն ալ իսկզբան ձոյին պատրանքը զգացած էր. բայց իր կիրքը յայտնի ըրած չըլլալով, հիմա իբր կորովամիտ մէկմը կ'երևցնէր ինքնդինքը, սակայն բոլորը խնտալու համար էր :

Ճոյ գութ շարժելու եղանակաւ մը նայեցաւ իրեն. իսկ տոքդորը պատախան չտուաւ, Սահարայի անհուն ամայութիւնը մտածելով զարհուրանք կը զգար. այն տեղերը կարաւանք շաբաթներ կ'անցընեն ջուր խմելու հոր մը զըտնելէն յառաջ : Անոր համար ալ մեծ խնամքով և ուշադրութեամբ գետնին ամենէն մանր ելեէջներն ալ կը դիտէր :

Այդ հոգերը ետքի դէպքերովը հանդերձ, զգալի կերպով երեք ճանապարհորդաց միտքը այլայլած էին. անոր համար ալ քիչ կը խօսէին, աւելի լութեամբ իրենց մտածութեց մէջ ընկըդմած կը մնային :

Նաև ճոյ այն ոսկիէ ովլիիանոսին վըրայ աչքը տարած ըլլալով ալ նոյնը չէր. լուռ կը կենար և անյագ աչքը նաւակին մէջ կուտած քարերուն կը նայէր, որ արդ անշահ էին յիրաւի, այլ ապա արժէր ունենալու չէին :

Միւս կողմանէ Ափրիկէի այս կողմի երեսոյթը անհանգստութիւն կը պատ-

ճառէր. կամաց կամաց ամենայն ինչ անապատ կը փոխուէր. ալ ոչ գիւղատեղի մը, և ոչ իսկ մէկ քանի խրճիթներու ժողով մը կը տեսնուէր. բուսականն իսկ կը խորշէր: Հազիւ թէ մէկ քանի խամրած տունկեր կը տեսնուէին, ինչպէս Սկովտիոյ թփաբեր հողերուն մէջ, սպիտակագոյն աւազի և կրակի քարանց սկզբնաւորութիւն մը, մէկ քանի հերձիք և փշալից թուփք այս անբերի ցամաքութեան մէջէն, կարծես թէ աշխարհիս սկզբնական կմակքն էր որ ժայռուտ ու հատու փուչերով ցցուած կը տեսնուէր: Այս ցամաքութեան նշանները տոքդոր Ֆէրկըսընի շատ հոգ կ'աղդէին :

Եւ ոչ իսկ կ'երենար որ կարաւան մը երբեք այն ամայի երկիրներու մէջէն ճանապարհորդած ըլլար. ապա թէ ոչ գոնէ բանակետղի յայտնի հետք թողած ըլլալու էր՝ մարդոյ կամ անասնոց ճերմկցած ուկորները: Սակայն ոչինչ : Այսպէս, կը զուշակուէր որ ընդհուպ աւազի անհունութիւն մը պատէր պիտի այն ամայութեան երկիրը :

Բայց և այնպէս ետ դառնալ կարելի չէր. հարկ էր յառաջ երթալ, տոքդորն իսկ լաւագոյն բան մը չէր ուզեր. փափաքելի էր իրեն մանաւանդ փոթորկի մը հանդիպիլ՝ որ զինքը այն երկրէն անդին քշէր: Եւ սակայն երկիրն քը և ոչ ամպ մը կար: Նոյն օրուան վերջը վիկորիան և ոչ երեսուն մղոն տեղ քալած էր:

Եթէ ջուրը պակսած չըլլար: Սակայն բոլոր բոլոր երեք կալոնաչափ¹ մնացած էր: Ֆէրկըսն կալոնաչափ մը ջուր մէկ դի դրաւ, սաստիկ ծարաւը մարելու վախճանաւ, զոր իննըսուն աստիճանի² ջերմութիւն մը անտանելի կ'ընէր. երկու կալոնաչափ կը մնար միայն բոցարձարծը մնուցանելու, և ասոնք միայն չորս հարիւր ութմուն խորանարդ ուսք կազ կրնային յառաջ բերել. արդ որովհետև բոցարձարծը առ ժամն ինը

¹ Գրեթէ տասուիրեք ու կէս լիտր:

² 50° հարիւրաստիճան:

Խսորանարդ ուաք կազ կը սպառէր, միայն յիսունեշորս ժամ ճամբայ կրնային ընել : Այս բոլորը անվրիպելի հաշուփ մը ստուգութիւնն էր :

— Յիսունեշորս ժամ, ըսաւ իր ընկերներուն : Արդ որովհետև միտքս դըրած եմ զիշեր ատեն չճանապարհորդելու, որ չըլլայ թէ առուակ մը, աղբիւր մը, լիճ մը զանց ընենք, ճանապարհորդութեան երեք ու կէս օր է որ մեզի կը մնայ, և հարկ է ամենայն կերպիւ ջանալ ջուր գտնել : Հարկ սեպեցի զձեղ բարեկամք, այդ ծանր վիճակին վրայ տեղեակ ընել, որովհետև մեր ծարաւին համար միայն մէկ կալոնաչափ մը կը պահեմ, և հարկ է որ խստիւ բաժնից չափ մը դնենք :

— Մեր բաժիններն որոշէ, պատասխանեց որսորդը . սակայն դեռ ևս յուսահատելու ժամանակ չէ . առջևնիս երեք օր ունինք, կ'ըսես :

— Այս, Տիք :

— Շատ աղէկ, որովհետև այդպիսի դէպքի մը մէջ կսկիծն անօգուտ է, իրեք օրուան մէջ ժամանակ կ'ունենանք որոշմունք մը ընելու, մինչև ցայն ատեն հսկողութիւննիս կրկնապատկենք :

Իրիկուան ընթրիքին, ջուրը խիստ չափով մը բաժնուեցաւ . օղիին քանակը առաւելաւ ըմպելիքին մէջ . սակայն հարկ էր զգուշանալ այն ոգիքէն՝ որ աւելի ծարաւեցնելու յարմար է քան թէ ծարաւն անցընելու :

Նաւակն այն գիշերը անհուն մեծութեամբ տափարակի մը վրայ հանգչեցաւ որ մէկ կողմէն սաստիկ կերպով ճնշուած կ'երևնար, և իր ծովուն երեսէն ունեցած բարձրութիւնը հաղիւ թէ ութ հարիւր ուաք կար : Այս դէպքով տոքդորը յոյս մը առաւ . յիշեց աշխարհագրաց կարծիքը, որ կը համարին թէ Ափրիկէի կեդրոնը ջրի ընդարձակ ընդունարան մը կայ : Արդ, եթէ իրաւոյնէ այդ լիճն կար, հարկ էր անոր երթալ . այլ հանդերձ այսու անշարժ երկնից վրայ ամեննեին փոփոխութիւն մը չէր տեսնուեր :

Այն գիշերուան անդորրութեան և

աստղաղարդ շքեղութեանը՝ անփոփոխ մը և արևուն կիղիչ ճառագայթները յաջորդեցին : Առաւոտեան ժամը հինգին տոքդորը ճամբայ ելելու նշանը տուաւ . այլ վիկորիխա բաւականապէս երկայն ժամանակ կապարեայ մժնոլորախ մը մէջ անշարժ կեցաւ :

Տոքդորը կրնար այն տառապեցուցիչ տաքէն աղատիլ, եթէ ուղէր բարձրագոյն գօտիները ելել . սակայն այս բանն ընելու համար հարկ էր շատ ջրի քանակ մը գործածել, որ այնպիսի ժամանակ անկարելի էր : Ուստի գոհ եղաւ միայն իր օդապարիկը գետնէն հարիւր ոտք բարձր բռնել . այն բարձրութեանը մէջէն ակար հոսանք մը զինքը դէպ 'ի հարաւային հորիզոնը կը մղէր :

Քիչ մը չոր մնով ու բեմմիքանով նախաճաշ ըրին : Կէսօրուան գէմ վիկուրիան հաղիւ թէ քանի մը մղոն քալած էր :

— Աւելի շուտ քալել կարելի չէ, ըստ տոքդորը . հրամայել չենք կրնար, հնազանդելու ենք :

— Ահ, սիրեցեալդ Սամուէլ, ահա այնպիսի դէպքերէն մէկ մին է՝ ուր մղիչ գործի մը չիկրնար արհամարհ սեպուիլ :

— Անշուշտ, Տիք, սակայն միշտ ենթագրելով որ շարժելու համար ջրի պէտք չունենայ, ապա թէ ոչ այն ատեն անոր վիճակն ալ մերինին նման ըլլալու է . ցարդ ամեննեին գործադրելի գիւտ մը հնարուած չէ . օդապարիկը դեռ ևս այն հանգամանաց մէջ կը գրտնուին, ինչպէս էին նաւք շողիին գիւտէն յառաջ : Վեց հազար տարուան ժամանակ հարկ եղեր է շոգենաւուց անուաւոր թերեն ու պատուտակները գտնելու համար . ուստի կը տեսնես որ մենք ալ գեռ ևս սպասելու ժամանակ ունինք :

— Անիծանձ ջերմութիւն, կանչեց ձոյ, ճակտէն վազած քրախնքը սրբելով :

— Եթէ ջուր ունենայինք, այդ տաքութիւնը կրնար մեզի օդապարիկ ըլլալ, վասն զի օդապարիկին ջրածինը կ'ընդարձակէ և օձապտոյտին մէջի բո-

յը կը նուազեցնէ . իրաւ է որ եթէ ջրեր .
նիս հատնելու վրայ չըլլար՝ խնայութի
ալ ընելու պէտք չէինք ունենար : Ահ ,
անիծեալ վայրենին որ զմեզ այն աղ-
նիւ արկդէն զրկեց :

— Ըրածիդ վրայ չես ցաւիր , Սա-
մուէլ :

— Ոչ , Տէք , որովհետև կարող եղանք
այն դժբաղզը ահաւոր մահուընէ մը
աղատել : Սակայն այն հարիւր լիտր
ջուրն որ նետեցինք՝ մեզի մեծապէս
օգտակար կ'ըլլար . անով ապահովա-
պէս տասուերկուքնէն մինչև տասուիրեք
օրուան ճամբայ կրնայինք ընել , և ան-
շուշտ այդ անապատէն կ'ազատէինք :

— Գոնէ ճամբուն կէսը ըրած ենք ,
հարցուց ձոյ :

— Բատ որում միջոց , այո՛ ըրած ենք ,
այլ ըստ որում ճամբու տեսողութիւն ,
ոչ , եթէ հովէն զրկուինք , որ կ'երեսայ
թէ բոլորովին զադարելու վրայ է :

— Հապա , պարոն , ըսաւ դարձեալ
ձոյ , մեղադիր ըլլալու չենք . մինչև ցարդ
բաւական յաջողութեամբ անցուցինք ,
և ինչ ալ ընեմ , անկարելի է որ կարե-
նամ յուսահատիլ : Զուր գտնանք պի-
տի , ևս ձեզի կ'ըսեմ :

Արդ գետինը մղոնէ մղոն հետդհետէ
աւելի ճնշուելով կը նուազէր և վերջա-
պէս ուկերեր լերանց ելսէջք դաշտա-
վայրին մէջ կ'անյայտէին . սպառեալ
ընութեան մը յետին սահմանքն էին :
Արևելքի գեղեցիկ ծառոց տեղ ցիրու-
ցան խոտերը կը տեսնուէին . խամրեալ
կանաչութեամբ խոտաւէտ շերտեր գեռ
ևս աւազուտից արշաւանացը դէմ կը
կուռէին . հեռաւոր լեռներուն դագաժ-
ներէն ինկած ժայռի կտորներ , իրենց
անկմամբը ջախջախեալ , սրածայր կո-
պին ձեւացած գետինը կը ծածկէին , որ
ապա խոշոր աւազ փոխուէին պիտի ,
և հուսկ ուրեմն անշօշափելի փոշի :

— Ահաւասիկ Ափրիկէն , ինչպէս դու
ձոյ նոյնը կ'երեսակայէիր . իրաւունք ու-
նէի քեզի համբերէ ըսելու :

— Շատ աղէկ , պարոն , ըսաւ ձոյ ,
ահա ատիկայ գոնէ բնական բան է .
ջերմութիւն և աւաղ . անտեղի ըլլալու

է այդպիսի աշխարհի մը մէջ ուրիշ բան
խնդրել : Կը տեսնէք , ըսաւ դարձեալ
ծիծաղելով , ես ձեր անտառներուն ու
մարգաց վրայ վստահութիւն չունէի .
մտփի դէմ բան մըն էր . չաժեր այսչափ
հեռաւոր տեղեր գալ Անդզիոյ դաշտե-
րը գտնելու համար : Ահա այս առջի
անդամն է որ ես զիս Ափրիկէ կը կար-
ծեմ , և քիչ մը անոր համն առնելու
շեմ ցաւիր :

իրիկուան դէմ տոքդորը ստուգելով
իմացաւ որ այն կիզիչ օրուան մէջ վիկ-
տորիան քսան մղոն քալած չէր . հա-
զիւ թէ արևը՝ շիտակ գիծ մը նմանող
հորիզոնին ետեր անյայտ եղաւ , ջերմ
մժութիւն մը պատեց զինքը :

Յաջորդ օրը մայիսի մէկ էր , հինգ-
շաբթի օր . սակայն օրերը յուսահատե-
լի միակերպութեամբ մէկմէկու կը յա-
նորդէին . առաւօտը՝ ամենեին առջի օ-
րուան առաւօտն էր . կէսօրը իր մի և
նոյն անսպառելի ճառագայթները ա-
ռատաբար կը ցոլացընէր , և գիշերը իր
ստուերին մէջ այն ցրուած ջերմութիւ-
նը կը թանձրացընէր , զոր յաջորդ օրը
դարձեալ միւս օրուան պիտոր անցու-
նէր : Հովը հաղիւ թէ զգալի , աւելի
շնչադարձութիւն մը կը նմանէր քան
թէ հողմոյ շնչել մը . անանկ որ կարելի
էր գուշակել թէ որ ժամուն դադարե-
լու էր նաև այն թեթև շունչն ալ :

Տոքդորն այս տխուր վիճակին մէջ
կը ջանար անխոռով մնալ , և փորձանաց
կիրթ սրափի մը հանդարտութիւնը և
պաղարիւնութիւնը կը պահէր : Դիտա-
կը ձեռքը հորիզոնին բոլոր կէտերը կը
դիտէր . կը տեսնէր որ անզգալի կեր-
պով յետին բլուրները կը նուազէին և
վերջին բուսականութիւնն ալ կը մա-
րէր . բոլոր անապատին անհունութիւ-
նը իր առջին կը պարզէր :

Շատ կը նեղուէր այն պատասխանա-
տութեանը համար որով ինքզինքը
բեռնաւորած էր , թէպէտ և ամենեին
բան մը չէր երևցընէր : Այն երկու մար-
դիկն , Տէք ու ձոյ , երկուքն ալ երկու
բարեկամք , զրեթէ բարեկամութեան
ու պարտուց ուժովը հեռու տեղուանք

քաշեր տարեր էր : Աղէկ ըրեր էր : Արդիւեալ միջոցները փորձել չէր : Միթէ այս ճամբորդութք անկարելոյն սահմանաց անցքը փորձ ընել չէր : Միթէ Աստուած աւելի հեռաւոր դարերու պահած չէր այդ ապերախտ երկրին ծանօթութիւնը :

Բոլոր այս մտածութիւնները, ինչպէս կը հանդիպի վհատութեան ժամերուն, միտքը պաշարեցին, և անընդդիմադրելի մտածութեանց յորդելովը, Սամուէլ ամեն տրամաբան դատողութենէ դուրս կ'ելլէր : Զընելու բանը ստուգելէն ետև, ինքնիրեն կը հարցընէր թէ ինչ բան ընելու էր : Կարելի էր արդեօք ետ դառնալ : Արդեօք չկա՞ր հողմոյ բարձրագոյն հոսանք մը որ զինքը նուազ ցամաք երկիրներ քշէր : Անցած երկրին նկատմամբ ապահովցած, գալու երկիրը չէր գիտեր . ուստի իր խիզճը զինքը նեղելով, որոշեց համարձակաբար իր միտքը երկու ընկերներուն հաղորդելու . յստակ կերպով իրենց վիճակին դիրքը հասկըցուց . զուրցեց անոնց ինչ որ ըրեր էր և ինչ որ ընելու կը մնար . ճշդիւ խօսելով կարելի էր ետ դառնալ կամ գոնէ ետ դառնալու փորձել . ինչ էր իրենց մտածութիւնը :

— Ես իմ տիրոջս մտածութենէն դուրս ուրիշ մտածութիւն չունիմ, պատասխանեց ձոյ . ինքն ինչ կրելու է ես ալ նոյնը կրնամ կրել, և նաև քան զինքն իսկ աղէկ : Ուր երթայ ես ալ հետը կ'երթամ:

— Հապա դո՞ւ, Քէննըտի :

— Ես, սիրեցեալդ Սամուէլ, յուսահատելու մարդ չեմ . մեր այս ձեռնարկին վտանգներն ոչ ոք քան զիս լաւագոյն դիտէր . սակայն այն վայրկեանէն որ դու անոնց դիմագրաւ կ'ըլլայիր, չուզեցի զանոնք մտքէս անցունել : Ուստի մարմին հոգի քուկդ եմ : Արդի վիճակին մէջ կարծիքս է թէ պէտք է յարատևենք և մինչև ցվերջ շարունակենք : Միւս կողմանէ ետ դառնալու վտանգներն ինծի նոյն կ'երևնան ինչպէս ա-

ռաջ երթալ : Ուստի յառաջ երթանք, դու կրնաս մեր վրայ վստահ ըլլալ :

— Շնորհակալ եմ, արդոյ բարեկամք, պատասխանեց տոքդորը ստուգապէս զդածեալ : Այսափ հպատակ գտնելու զձեզ՝ վստահ էի . սակայն այդ խրախուսիչ խօսքերուն պէտք ունէի : Դարձեալ կը կրկնեմ շնորհակալ եմ :

Եւ զգածեալ սիրով այն երեք անձինք մէկմէկու ձեռք սեղմեցին :

— Ինծի մտիկ ըրէք, ըսաւ դարձեալ ֆէրկըրն : Իմ քննութեանցս նայելով, կուինէայի ծոցէն գրեթէ երեքհարիւր մղն հեռի ենք . ուստի անապատը կարելի չէ, որ անսահման ձգի, որովհետև ծովեղերքը բնակութիւն կայ և երկիրը ինչուան որոշեալ տեղ դէպ 'ի ներսերը ծանօթ է : Եթէ հարկ ըլլայ՝ դէպ 'ի այն ծովեղերքը մեր գնացքը կ'ուղղենք, և անկարելի է որ ովասիս մը կամ գոնէ ջրհոր մը չգանենք, ուր մեր ջրի պաշարը նորոգենք : Բայց մեզի հովն է որ կը պակսի, և առանց անոր օդուն մէջ բուրովին անշարժ կը մնանք :

— Հպատակութեամբ սպասենք, ըսաւ որսորդը :

Սակայն փոխնիփոխ ամենքը նոյն անլմբնալի օրը անօգուտ տեղ չորս զին միջոցը զննեցին . ամեննեին յոյս տուողբան մը չերևցաւ : Գետնին յետին անհարթութիւնները արևեռն մարը մտնելովը անյայտ կ'ըլլային, որուն հորիզոնական ճառագայթները երկայն կրակէ գծերու նման այն անհուն դաշտագետնին վրայ երկլնցան : Անապատն էր :

Ճանապարհորդք, ինչպէս առջի օրն ըրեր էին, բոցարձարծը սնուցանելու համար հարիւր երեսունհինգ խորանարդ ոսք կազ սպառելով, և ոչ տասնուհինգ մղոնի չափ տեղ քալած էին . երկու քսեստ ջուր ալ հարկ եղաւ զոհել սաստիկ ծարաւը մարելու համար :

Գիշերը հանգիստ անցաւ, մանաւանդիէ շատ հանգիստ . տոքդորն ամեննեին քուն չեղաւ :

Իր շարունակուի :